

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական

51^{րդ} ՏԱՐԻ, ԹԻՒ 26

Գ. ՇՐՋԱՆ

29 ՅՈՒՆԻՍ 1902

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մասիս շաբաթերքի տարեկան բաժանորդագինն է Կ. Պոլսոյ համար Բառուսի ղ. եւ գաւառներուն համար Վիսաւն ղ., կանխիկ վճարելի: Արտատպահման 12 փրակ կար 5 րուպի: Թղթատարական ծախքը խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն լրկողունոյի: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկէն: Մասիս խմբագրական կէտի ամեն շաբաթ աւտու: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած են, պէտք է խնայել խմբագրութեան: Ժամանակ անցնելէ վերջոյն սեւակ առարկութիւնները նկատողութեան չեն առնուիր:

Ձի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

Ձեռքէ կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐԱՅԻ

Հասցէ

درعليه آغوب مطبوسيان مطبعه سنده «ماسيس» غزتهسى اداره سته

ԽՐԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ» Ի

Տպարան Յ. Մատթէոսեան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Rédaction de la Revue MASSIS

Imprimerie H. Matteosian

CONSTANTINOPLE

ԱՄԱՌԱՍՏՈՒՆ
Յանախորդաց դերութեան
համար

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ


Եթէ կ'ուզէք ամէն
անսակ գոնարեղէններ
ունենալ՝ դիմեցէք
կ. Պոլիս, Ոսկերչաց
Շուկայ մեծ փողոց քիւ 13



Հերմայի վաճառատունը ունի եւրոպական
ճաշակով պարարատուած գոնարեղէններ,
ամենքն ալ տաղշափարդ ըլլալու պայմանաւ
Հերմայի վաճառատան գիներն անմրցելի են
Հերմայի վաճառատունը ունի արծաթեղէն
առարկաներ,
Հերմայի վաճառատունը ունի ժամացոյցներ
եւ արծաթեայ գաւազաններ (պաքօն),

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հարիւրիկն քան կանխիկ, մնացեալին հա-
մար չարաթեական հարիւրին հինգ վճարում,
կանխիկ փողին համար 100ին 5 գեղ,
Գործածուած գոնարեղէններ՝ եթէ փառ-
ուած չեն, 100ին 10 գեղով ետ կ'առնուին:



Ձեռքի, ոտիցիւ ձեռքի ու ոտի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին:

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի
մեքենայի մնայ, իսկայ էական կէտն է լաւ մեքե-
նայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը
անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվեր-
ջ զգոնութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ զիտէ թէ՛

ՍԻՆԿԷՐԻ

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն
աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ
դիւրագործածելին ըլլալուն բովանդակ աշխարհի
մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

ՍԻՆԿԷՐԻ մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառա-
տանց մէջ:

ԲԵՐԱ, Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դիմաց:

ԿԱԼԱԹԱ } 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
} 2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին Դիմաց

ՊԱԼԻՍ } 1. Սուլթան Համամ.
} 2. Սուլթան Պէյազիտ:

Դասերը եւ ցորգութիւնք ձրի.

Կատարեալ երաժշտութիւն

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ

ՇԱՐՔԱՐԱՆ
ՄԱՍՆԱՎԱՅԻՆ
ՎԱՄԱՌԱՍՏՈՒՆ

ՄԱՍԻՍ

5179 ՏԱՐԻ

— 29 ՅՈՒՆԻՍ 1902 —

ԹԻՒ 26

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Օրումն կեանքէն. **Տ. Ա.** — Դրական էջեր. Յիշատակ մը. **ԵՂԻՍ. ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ:** — Հից
Յուզմունքներ (Սիրերգ) **ՎԱՐԴ.ԳԷՍ:** — Կէս բժշկական. Կուրադիին շուրջը. **ՏՈՐՐ. ՅՈՎԱ. Տ.**
ՍՏԵՓԱՆԵԱՆ: — Սիրսին սիրածը . . . (Նորավեպ ժողովրդային կեանքէ) **Ս. ՏԷՐ. ՅԱՆՈՐԱՆ:** —
Բնականական տառեր. Վճարորդ. **ԲՕԼ. ՊՈՒՐՃԻ:** — Յուշահեր:

ՕՐՈՒԱՆ ԿԵԱՆՔԷՆ

Կերևայ թէ թատերադրմի կեանքն ալ իր
նոքալոյթն ունի, նոյն իսկ մեր դերասաններ-
ուն ու դերասանուհիներոյն համար, — սիր-
ուած միջավայրի մը կարօտը՝ որ տարիներ
ետքը կ'արթննայ յանկարծ՝ անդիմադրելի
բողձանքի մը պէս, ինչպէս պատահեր է այս
անգամ Տիկին Հրաչեային: Մեր վաղածանօթ
դերասանուհին, տասը տարուան մեկուսա-
ցումէ մը ետքը, փափաք կամ քմահաճոյքը
ունեցեր է ներկայացման մը մասնակցելու . . .
անխօս աղախնի դերի մը մէջ, — Պապու,
Թալէլի թատրոնում, — միեւնոյն ատեն
վարելով երեկոյթին ռեժիսորութիւնը:

Տիկին Հրաչեան անխօս . . .
Հետեւէն, դժուար է մեզի հաւատալ այս
առաջադրանքի, կամ գէթ գաղափար
կազմել թէ ինչպէ՛ս յանձն առաւ ընմի վրայ
լու մնալու զոհողութիւնը, ա՛յն կինը որուն
անձնայատկութիւններէն մէկն էր խօսունու-
թիւնը, — երկտասարդութեանը օրերուն, —
աչքերուն խօսունութենէն ետքը: Պապուի
թատրոնէն ետքը, հակառակ իրենց համար
անընդհատ ըսուածներուն ու գրուածներուն,
թէ զրակն ու նիւթապաշտ մարդիկ են, այդ
ներկայացման գիշերը բանաստեղծ կտերի են,
լուսանալով Տիկին Հրաչեայի «լուս-անրար-
բառ» երեւումէն, առանց բնաւ պահանջելու
որ Վիենն փող ենք տալիս, նրան պէտք է

խօսի» . ու բառական ալ galant հանդիսացեր
են, չքեղ ծաղկեփունջ մը նուիրելով անոր,
համակիր ծափահարութիւններու մէջանել:

Զարմանալին հոն է որ, — ինչպէ՛ս տես-
նուեցաւ Արեւելքի ուղղուած Կովկասեան
Բրոնիկէ մը, — ուրիշ ծանօթ դերասանուհի
մը ու դերասան մը, Տիկին Կրասիլնիկեան եւ
Պ. Խատիսեան, իրենք ալ «աղախնի եւ ծա-
ռայի համարեա անխօս դերերում» ընմ ելեր
են: Նախաճորերու երկրին մէջ, թատերա-
կան կեանքի վերջին նորութիւնը . . . համարու-
թիւնն է արդեօք:

Անշուշտ, Տիկին Հրաչեան զօրաւոր պատ-
ճառ մը ունէր ընմի վրայ լուս մնալու, —
ձայնի մարածութիւն մը թերեւս, չի գործա-
ծելու համար «խռպոտութիւն» ագեղ բառը,
— որ շատ բան պիտի պակսեցնէր իր դէմ-
քին, չարժուէներուն ու նայուածքին հրա-
պոյրէն: Բայց հասարակութիւնը, աւելի ա-
ռաջ տանելով իր համակրանքը, փափագ
յայտներ է «Տիկինը տեսնել մի մեծ դերում».
եւ իր գահացումն ալ պիտի գտնէ, վասն զի
«սիրտդների խումբը» — amateurs — զոր կը
վարէ Տիկին Հրաչեայ, մտադիր է եղեր ա-
ռաջիկայ ձմեռ քանի մը ներկայացում տալ:
Հետաքրքիր պիտի ըլլայինք իմանալու խօ-
սուն դերասանուհիին առաջ բերելիք տպաւո-
րութիւնը, անխօսէն ետքը, տպաւորութիւնը

այն թա՛ւ ձայնին ու կորովի շեշտերուն որոնք՝ հակառակ կնոջական փափկութեամբ բուրբովին պարուրուած չըլլալուն, թովիչ, զիւթիչ բան մը ունէին, երբ Հրաչեան՝ զիրգ, սիրուն աղջիկ մը տակաւին, ու յետոյ մանկամարդ կին, «հովւուհի»ի դերէն մինչեւ «Գամելիազարդ Տիկին»ի դերին ել բարձրանար, օր մըն ալ յանկարծ հրաժարելով թատերական ասպարէզէն՝ զայն վերստին ողջունելու համար . . . երբ թոռնիկներու մեծ մայր եղած է թերեւս հիմակ ։ Արուեստին սէրը, բնական կեանքի կարօտը ասկէ աւելի բուռն ու յամառ կերպով արթնցած ըլլալը չեմ յիշեր մեր ո՛չ մէկ դերասանուհիին քով ։ Անոնք, կամ յարատեւ աշխատողներ կըլլան, հաւատարիմ իրենց արուեստին ու անընդհատ յաջողութեան մէջ ։ Ինչպէս Տիկին Սիրանոյշը, կամ ինկածներ, կորսուածներ, ինչպէս Տիկին Արուեստիկը ու Տիկին Փասուլիաճեանը, առանց հեաք մը ձգելու, թէ հիւանդանոցն են կամ գիւղի մը անկիւնը, թէ մեռած, — առանց յիշելու կանուխէն հիւժած, գերեզման իջած երիտասարդ դերասանուհիները ։ Հրաչեան, այս դասակարգերուն մէջ, բացառութիւն մը կը դառնայ, ընտանեկան հանգստաւէտ կեանքի մը անդորութենէն հրաժարելով յանկարծ՝ բնական կեանքի յուզումները ըմբռնելու համար վերջին անգամ մըն ալ, ինչպէս նաւազ մը՝ շատօնց հեռացած ծովէն եւ իր աշխոյժն ու կորովը կորսնցուցած՝ նաեւ մը մէջ նետուէր օրին մէկը, փոթորիկը կարօտնալով ։

Թիֆլիզ՝ թատրոնական մասնախումբ կը կազմուի, 1902-93 եղանակին համար, ու պայմանագիրներ կը կնքուին դերասաններու եւ դերասանուհիներու հետ . Պաքուի մէջ՝ նոյնպէս . միեւնոյն ատեն «սիրողներ» չրջուն խումբեր կը պատրաստուին «արամաղիքական» ներկայացումներու համար . մրցումի, զիրար գերազանցելու ճիգեր, փոթորիկները բնական կեանքին, որմէ անմասն չուզեր մնալ Տիկին Հրաչեան, այսօր լուռ վաղը խօսուն ։

Հիմնադի չէ՞ք գտներ արուեստագէտի ոյս վերարժարժեալ եղանակը ։

* * *

Պիտի վարանէի, փոխանցում մը ընելու պահուս, արուեստագէտէն զէպի եկեղեցա-

կանը եւ թատրոնական կեանքէն զէպի . . . վանականը — պզտիկ պայթակղութիւնը պատճառելու վախով — եթէ՛ ակարան չդիպցող եռանդը ու յոգնիլ չգիտցող դրոն, նէսթիւնը գերազանցապէս չի պատշաճէ՛ պայծառութեան մը որ յիշուեցաւ օրաթիւքի բուն մէջ . — «Երուսաղէմի Պատրիարք Ամեն Տ. Յարութիւն Սրբազանի պատրիարքական թոռակալութեան տանտնակալը տօնուկը վերջերս, Ս. Յակոբեանց վանքին մէջ Սրբապետութիւն, սեղան մը տրուեր է եւ բազմաթիւ շնորհաւորութիւններ եղեր են Ն. Ամենապատուութեան» ։

Հովուապետութեան ի՛նչ բեղմնաւոր ջան մը — այդ տառը տարին — աղբյուր Պատրիարքին համար, այն նշանակելի օրէի վեր ուր սաք կը գնէր Եաֆայի ծովափը՝ ու կ'երթար հանդիսաւոր կերպով բազմաթիւ սիրելեական ակնոյթ . Միաբանական դրոնը՝ բարդուած, վանքին պարտքը զիջուած, լուրջ ու անաղին աշխատութեան մը կարօտ անբաժնի բան ։ Վեհապետեան Սրբազան նորիկ մը Ն. Երուսաղէմի համար . ամէն բան սերտօրէն ուսումնասիրած էր հոն անցուցած ժամանակահատիւներուն մէջ . զիտէր թէ ի՛նչ պէտքեր կան հոգեւոր թէ մատակարարական, վանքի կան թէ եկեղեցական վարչութեան մէջ . ի՛նչ Պատրիարքական պաշտօնին բարձր հանգումները եւ Միաբանութեան կողմէ գտած անխտիր կերպով սիրալիր ընդունելութիւնը միանալով իր այս գիտակցութեան ու անհաղթական արժանիքին հետ, ատեն իրեն զիջում մը որմէ բարիք եւ օգուտ միայն կրնային տակնկալուիլ ։ Շատ յեղեղուած ու ամբողջական դարձած խօսք մը կրկնած պիտի ըլլատէր թէ Տ. Յարութիւն Ս. Պատրիարք «Լիովին պսակեց այդ անկալութիւնները՝ արդիւնքը, իրականութիւնը մէջսեղծ է, թէ՛ Երուսաղէմ այցելող ուխտաւորներուն համար եւ թէ՛ անոնց որոնք հեռուէն՝ կը տաքըքուրին Երուսաղէմի ։

Յարաճուն բարեքման, զարգացման, կանխաւորութեան շրջան մը եղած են այդ տարիները Երուսաղէմի մեր կրօնական հաստատութեանց համար, ու արտօլին բազմաթիւ ձեռքարկներ որ Վեհապետեան Սրբազան քանի՛

տաննամեակներ շարունակէ իր հայրական հովանին նուիրել այն նահապետական պատկանելի ընտանիքին որ Ս. Յակոբեանց միարանութիւն կը կոչուի :

Ու այս սողերը զրած վայրկեանիս , անխոտիելիօրէն , վերջուշուով կ'ունենամ այդ տաննամեակին սկզբնաւորութեանը , երբ՝ սխալակ խմբադիր՝ Արեւելիի Տնօրէնութեան կողմէ թղթակից եւ ուղեկից կը կարգուէի Երուսաղէմի Պատրիարքը իր ամօտը տաջնորդող պատգամաւորութեան . եւ գրչիս ծայրը կու գան յիշատակներն այդ ճամբորդութեան , մեծ մասը ամօտութեամբ արդէն «Վասփորէն Յորգանան» նամակներու շարքի մը մէջ , ու մէկ մասն ալ մոռցուելու սահմանուած , եթէ ոչ մոռցուած արդէն : Եւ եթէ փորձէի «Օրուան Կեանք»-ի մը ներած տաննանին մէջ պրպտել զանոնք անգամ մըն ալ , այս տաննամեակին առթիւ , նորէն առաջին վերջուշումս պիտի սեւեռէր զէպի Տ. Յարութիւն Պատրիարքը զոր տաջին անգամ ըլլալով շողենաւին մէջ միայն տեսայ մօտէն ու ծանօթանալու պատիւը ունեցայ : Հոս , Պատրիարքարանին մէջ , ուր ամէն օրազրոյ կերթայ իր տունին պէս , զժուար կղած էր ինծի՝ մօտենալ Արքազանին , որուն գոս ձայնը ու խոստապահանջ հրահանգները՝ իր աշխատութեան բազմոցին անկիւնէն , կը խրաչենէին զմեզ ամէնքս : Անգամ մը միայն , Մերեւմտ-Փուլի Յարութիւն էֆին ընկերացած , սիրտ առած էի ներս մանկու , Երուսաղէմէն հասած համարաւորութեան մը հրատարակութեան արտօնութիւնը խնդրելու համար , Արեւելիի մէջ , Մերեւմտ-Փուլին , շատ անուշ-լեզու խօսուածքով մը եւ փափկութեամբ՝ տաջարկը ներկայացուց : Պատասխանը յանդիմանականով խառն մերժողական եղաւ երկուքուս համար ալ . արդէն , օրագրի ներկայացուցիչ , լրարբեր բռնորդ Յարութիւն Պատրիարքին շատ անորոշելի չէին եւ Մերեւմտ-Փուլին՝ իր սրտաւետութեամբը՝ կանխաւ կռահած էր . բայց Արեւելիի սիրուն , որուն խմբագրութեան հետ մտերմական կապերով կապուած էր , յօժարած էր փորձ մը ընելու . եւ առանց պաշարիւնը կորսնցունելու

լու դուրս ելաւ՝ ըսելով . « Կը գուշակէի արդէն » :

Այս միջադէպը , թէեւ հին , այնքան բուռն կերպով ազդած էր վրաս , որ երբ շողենաւ մտայ ու տեսայ ծերունի Պատրիարքը՝ շրջապատուած եկեղեցականներէ ու աշխարհականներէ , որոնք ողջերթ մաղթելով կը մեկնէին հեաղհեաղ , իր հետ դէմ առ դէմ գտնուելու . նօթեր տոնելու , թղթակցութիւն գրելու գաղափարը երկիւղի պէս բան մը կ'ազդէր ինծի . ու արդէն իսկ զղջացած էի : Բայց հազիւ ժամուան մը ճամբայ առած էինք եւ Արքազանը՝ ընթրիքէն ետք՝ թաւշայ գդակ մը զրած գլուխը ու բարակ մաշտակ մը հագած , կըր նստաւ ամօտի մը վրայ , իր ուղեկիցներուն քով . ինծի այնպէս երեւցաւ որ նոր անձնաւորութեան մը առջեւ կը գտնուէի , զուարթ , խօսուն , բարեհամբոյր եկեղեցականի մը հանդէպ որ դուրսուանք ու համակրանք միայն կ'ազդէր . ու քանի կը յառաջանայինք՝ այնքան աւելի սիրելի կը դառնար Պատրիարքին մտերմութիւնը , զուարթախօսութիւններով , մանրալէպերու պատմութեամբով , եպիսկոպոսներուն ուղղութեամբ սրամիտ ակնարկութիւններով : Իր դիտողութիւններն ու յանդիմանութիւններն իսկ , — որոնց է՛արժանանայինք երբեմն , պէտք է խոստովանիլ , երբ նաւահանգիստի մը կը մօտենայինք ու հարկ էր ընդունելութեան մը պատրաստուիլ , — քաղցրութիւն մը , հայրական շեշտ մը ունէին :

Յուպէլի վանքին մէջ , ուր վեղարը յաջորդեց գդակին եւ վերաբերուն մուշտակին , վերստին գտանք այն եկեղեցականը զոր տեսած էինք Պոլսոյ Պատրիարքարանին մէջ , սա տարբերութեամբ որ , իր լրջութեանը ու պատկառութեան երեւոյթին կը խառնուէր տանութիւնը մը բարեմօյն ու սիրալիր վարմունքը իր հիւրերուն հանդէպ , ինչ որ շարունակուեցաւ Երուսաղէմի մէջ ալ , անոյց ու անմոռանալի տպաւորութիւններ թողլով վերադարձողներուս վրայ :

Տ. Ա.

Բարեգործութիւն . — Ժամհարեան Եղբայրները , որոնք իրենց անունով Որբանոց մը կը պահեն Մարաշի մէջ , յառաջիկայ տարուան ծախքը՝ 10,000 ֆրանք՝ զրկեր են :

ԳՐԱԿԱՆ ԷԶԵՐ

Եղիա Տեմիրճիպաշեան՝ Հիւանդանոցէն մեկնելէն ի վեր բողոքած է նաեւ գրական հրապարակի, ուր անցած տարի, այս միջոցին, այնքան գեղեցիկ էջերով կ'օժտէր լրագրութիւնը: Հետեւեալ արձակ բանաստեղծութիւնը որուն ձեռագիրը խնամով պահած էինք այն միջոցին ուր դադրեցաւ գրելէ, կը հրատարակենք այսօր՝ գրական հրապարակին վրայ վերադառնալու Եղիա Տեմիրճիպաշեանը ողջունելու փափագով և մեր գրասէր թերթը-ցողներուն հաճոյք մը պատճառելու համար, որոնք կարօտեցած ըլլալու են իր գգայուն գրութեանը:

Այս էջը, Յիշատակ մը, 1901ի մայիսին Հիւանդանոցէն գրուած, ուղղուած է առ Տիկին Էլեն Նիսըն որ անձնուէր գործուրանք մը ունի միշտ տարաբաղդ բանաստեղծին վրայ:

ՅԻՇԱՏԱԿ ՄԸ



Եթէր տարի, եթէր անդամ ինձ պաշտելի դու՛ Կին, եթէր տարի անցաւ արդէն յաւերժայեան այն գիշերէն ի վեր, ուր դուռդ դարակի, գոշակելով որ սրտի մը դուռն ալ էր այն: Ա՛հ, ինչո՞ւ զարկի դուռդ, զքեզ ինչո՞ւ ճանչցայ, զքեզ չը ճանչցած է՛ր չը մեռայ, եթէր անդամ ինձ պաշտելի դու Կին:

Օրն ի լո՛ւն սենեակ վնասած էի, ձիւնին տակ որ անընդհատ տեղաց այն օր մինչեւ իրիկուն: Ծանապարհօրդ մըն էի: Կէս ժամ միայն տեւած էր ճանապարհորդութիւնս, ծննդ-եանս թաղէն մինչեւ Բիւրա: Սակայն հետա-գոյն երկիրներէ հասնող ուղեւորէն աւելի խոնջեալ էի: Կորնակաւ տան հինգ տար-ուան ամայութեան հազդին բռնն ուսիս վրայ կը կրէի:

Հօրնակաւ տունէն վերջին բաժնուողը հօրնակաւ տան առաջին հրապոյցն եղած էր, մա՛յրս որ ինձի քոյր մը կը թուէր: Ու մա՛յրս կ'օղորայի, ու մա՛յրս կը վնասէի հինգ տարիէ հետէ: Զոհաբերութեան յօժար հրեշտակը կը վնասէի, երբ դուռդ իմ առջեւ բացուեցաւ ա՛յն մութ գիշերն, որ ինձ՝ ձիւնածածուկ՝ ուրուականի՛ մ'երեւոյթը կ'ընծայէր: Սե՛ւ միմալ աչքերս կը մնային բովանդակ մարմ-նոյս վրայ. սեւ մը՝ հուզուածն այժմ, քանդի քառորդ դար մեկան գոգցես ու մեկամաղձու-թիւն հայթայթած էր իմ դրութեանցս անիկայ:

Երբ դուռը բացիր, ընդհանուր տեղէնէ ահաբեկ գրեթէ, ետ ետ գացիր: Այլ զիմար վրայ սեւեռուած քննող նայուածքդ, հասեալ բանօք՝ մանաւանդ թէ խանդալատան ողորուած իսկոյն, սա խօսքերն արտաբերել գրեթէ. « Եզրայրս չէ. բայց եղբորմէս աւելի ինձի կը նմանի՛. ո՞վ է: » Եւ անհամբեր զիս սրահդ առաջնորդեցիր: Աթոռ մը քշելով առաւարտին քով, ուր զիս հրաւիրեցիր նստիլ: Սակայն այնքան, այնքան յոգնած էի որ... կանգուն մնացի, ինչ որ ընդհանրապէս տ. վտրոթիւնս կամ պէտքս է մեծ յոյնութիւն ներս մէջ. երբ զգակիս վրայ, կըստ մօրս, քիս վրայ, երբ զգեստներուս վրայ ձեռն տարիները հալեցան մէկիկ մէկիկ, թխտած երիտասարդ մը ի յայտ եկաւ, որուն հերթը մէջ միմալ կը յամառէր ճերմակն: Իմացար այն ժամանակ որ... սղաւոր եմ ես ալ քիւ նման, իսկ երբ լմացար որ ընտանեզուրի եմ կամ որը՝ աւելի կարճ եւ աւելի արատաւ լառով, ստիպեցիր՝ խորապէս յագեղով քաղովիմ աթոռին վրայ, դողցես վախնալով որ կը թողում կ'երթամ, այնքան յարեցար ան ծանօթին, այնքան վստահութեամբ վերաբերուեցար իրեն: Նստեցայ. վառարանին տ. արտիզ ջերմութիւնն այտերուս դոյն բերեալ եւ ժպիտ աչքերուս՝ սրտնք այնքան թալ ծրդին արտայայտութիւն ունէին երբ նստածքդ առաջին անգամ անոնց մէջ առաջուցաւ: Եւ հիմայ երբորդ անձ մը մէկեղ եկաւ. սառնամանեաց յունուարին ողոր մայիսն էր յաջորդած:

Սոյն կերպարներու թեմանց անտիկալային բուն տարալստարհիկ դիմացդ վրայ բերած բացատրութեանց յաջորդական փոփոխութեան կը հետեւէի իրր երազի՝ մը մէջ, իրարմէ իրար տալով իրար կը զանէինք հեղձեալ: Կը զգայի թէ դորովանք քչադ պիտի վայելէ իսկ դու կը նախազգայիր թէ քու տունը ինձ համար հանգրուան մը պիտի ըլլար աստ. նախազգային ուղիւստիւն մէջ ուր նստած է քիւ ճակատագիրն: Նա մանաւանդ կը նախազգայ յի՛ր, տարաբաղդ դու կին պաշտելի, որ ինձ համար դուռն ալ այնքան պիտի տառապի որքան ոչ ոք, ո՛չ իսկ մայրս թիւրեւ, դու ալ ինձ համար — վառարանը միշտ ինձի բն:

մը կը պատմէ զոր չեմ կրնար բացատրել,
այլ որ անբացատրելի կերպով զիս կը յուզէ:
Մեր բարեբախտութեան այն առաջին ժամն
ողուորդ այդ սրահիդ վառարանը վերջին
այս դա՛ռն օրերուս պատմութիւնն էր, զոր
եօթն ամ առաջ կանխաւ կ'ընէր մեզ խորհրդ-
գատր իր լեզուով:

Դա՛ր մը քնացայ այն առաջին գիշերը,
անգիտային խորութեամբ քուն մը՝ միանգա-
մայն յոյժ խռովեալ սակայն: Հազիւ աչքերս
փակուած, ցերեկի ձեան բուռն տարափն
սխաւ շարունակուիլ. ու Բերայի փողոցներն,
ուրիշ սենեակ փնտռելով կ'անցնէի քնոյս
մէջ, ալեաց մակընթացիկ շարայարութիւն
մէջն ոյճեք մինչև ձեան սառնասառցոյ
լսնարանները կը բարձրացնէին զիս՝ հոնկից
յեղակարծ տեղատուութեամբ մը մինչև անե-
րեակայլի խորախորշերով խաւարայատակ-
եալ անգիւղոց ալքերուն մէջ՝ դահաւիժելու
համար: Այդ խոր ու խաւար խորշերը՝ տեսած
աննախնիրա էին, որոնցմէ կը խորչէի ու կը
հեռանայի: Ու երբ երեւնին իրեւ հաւութեի
մը տակ գրգանոյչ հանդստեան մը վայելքն
ունէի տարտամօրէն, սիրագորով ա՛յն հան-
գստեան զոր դպացի վառարանիդ չուրջ, քաղցր
ու զերազիւ առաջնականութիւն: Հայօրէն
իբր տեղադարձնող, հոգեզմայլօրէն զիրար
ընդգրկող մեր կերպարանաց թեւածուն երա-
նութիւնն անսպասեալ՝ կը պարուրէր ասոր-
տամօրէն զիս երբ երբեմն: Եւ այդ հեշտա-
լին անուրջն աւելի իրականութիւն էր քան
իրականութիւնն հրապուրանոյչ զիմացդ փո-
փոխանց զոր իբր յերազի կը զիտէի անյագ,
վարը, վառարանիդ քով, արթնութեանս ա-
տեն: Մտայի մեծ կորստեանէս յետոյ՝ Հար-
ման-Պալիի հնգամիայ անկենակից կենացս
մէջ յամառար երազած հնգկաքարոյ անհուն
կի՛րքը, ներվանա՛ն էր արդեօք առաջին այդ
գորատու քունս օթարանիդ մէջ: Առաւօտուն
ի՛նչպէս արթնցայ: Ա՛հ, առաւօտուն ինչո՞ւ
արթնցայ: Չէ՞ր բաւեր որ հէ՛դ մայրս տա-
ռապած ու զրկուած էր՝ որսլս գրեթէ բո-
լոր մայրին անո՛նց որոնց թեւին վրայ քնար
մը դրաւ երկին, — աշխարհ գալը տարտաղ-
ղութիւն, իսկ այդ՝ տարտաղղութիւն կրկին:
Չէ՞ր բաւեր այդ, Հա՛րկ է եղեր, գրուած

ճակատագրուած է եղեր որ օտարունի մը
նոյն եւ աւելի սառնապանաց ու զրկանաց
մատնուի բանաստեղծին համար: Կա՛րկ է եղեր,
էլէն հոգի՛ս, որ իմ Գողգոթայիս ճամբան
ինծի հեռեւիս: Ա՛հ, է՞ր դուռդ զարկի այն
գիշեր: ա՛հ, է՞ր արթնցայ այն առաւօտուն:

Սպասուած բան մը պիտի ըլլար գրեթէ,
եթէ սենեակիս բանալով առաւօտուն, տեսնէիր
որ կը քնանամ դեռ... ընդ մի՛շտ: Երբ իրի-
կունը դուռը բացիւ եւ երեւեցայ քեզ իրեւ
կրեւում մը, իբր օրհասակա՛ն մ'ոտքի վրայ,
ձիւնաղգեստ, գերեզմանէն դո՛ք դուրս ելած,
գերեզմանի՛ աւէն պարագայի մէջ՝ կարօտ,
գերեզմանին հանգստեանը կարօտ՝ անձկարօտ,
երբ իրիկունը՝ կ'ըսեմ՝ դուռը բացիւ եւ աչ-
քերս զիտեցիր, միթէ չը տարակուսեցա՞ր որ
կարենամ... հասնիլ դարնան: Պիտի լայիր
ու պիտի ըսէիր. «Մե՛ղք. դարնան նման գե-
ղազուարթ եղաւ, երբ առաջն ու կաթէն
կաղզուրեցաւ, ինք որ ուրուականի մը կը
նմանէր նախ՝ ինչպէս որ ողբերգութեանց մէջ
կ'երեւնան, եւ ապա տեղոյն ու սեւագգեստ՝
Ալֆոնս աը Միւսէի ուղեւորին նման Դեկ-
սեմբերի Գիշերուանը մէջ, Մե՛ղք, ի՛նչու
աւելի առաջ դուռս չը զարկաւ, ես կրնայի
վերականգնանայնել զայն: Ո՞վ էր... Այցե-
տումս չունի՛ր... Սա հատորիկին մէջ անունը
թերեւս... Ռաֆայել... իր անունը...
Եղիա՛, Եղիա՛, Եղիա՛...»

ԵՂԻԱ ՏԵՍԻՐՃԻՊՈՒՆ

ԿԵՍ—ԲԺՇԿԱԿԱՆ

ԿՈՒՐԱՂԻԻՆ ՇՈՒՐՁԸ

Ամբողջ աշխարհի լրագիրներու ընթերցող-
ներն, անխտիր, կրկին ու կրկին տեսան վեր-
ջերս այս կուրաղիին չուրջը դարձող հեռա-
ղիւններ ու բժշկական տեղեկագիրներ, Անգ-
լիոյ թագաւորին հիւանդութեան հեռեւան-
քով: Ու ամէն մարդ՝ այս օրերուս՝ լսեց թէ՛
ի մէջ այլոց կուրաղի բուժած բան մըն ալ կրնայ
դանուիլ եղեր փոքին մէջ, որ գործողութիւն
կը պահանջէ, ինչպէս դարձեալ հաղորդեցին

հետաքիրներն ու ըսչկական տեղեկագիրներն՝
էտուրտ է-ի վրայ կատարուած վերաբուժա-
կան գործողութեան առիթով :

Կուրաղի ըսուածը յաւելուածի նման բան
մըն է որ կ'երկարի թանձր աղիքին եւ նուրբ
աղիքին իրարու միացած մասին քովէն :
Յայտնի է անշուշտ թէ ամբողջ մարսողական
խողովակը պարապ գործարան մըն է , հո՛ս
քիչ մը աւելի լայն , հո՛ւն քիչ մը աւելի նեղ,
բայց ամբողջ երկայնքին շարունակելի վիճակ
մը ունի , մէկ ծայրէն մինչեւ միւսը : Եւ
եթէ ամբողջ մարսողական խողովակը նման-
ցընենք պողտայի մը , որուն մէկ ծայրէն
մտնողը միւսէն դուրս կ'ելլէ՝ ցորչափ շար-
ժումի մէջ է , ան ատեն շատ ճշգրտութեամբ
կուրաղին ալ կրնանք նմանցնել այդ պող-
տային մէկ կողմէն երկնցող անել փողոցի մը ,
որուն դիրքը հասկնալու համար բաւական է
յիշել թէ կը գտնուի մարմինին աջ կողմը ,
փորին մէջ , ածուկին վրայ :

Իբրեւ մարսողական խողովակին մէկ
մասը՝ կուրաղիին մէջն ալ պարապ է հարկաւ-
ան ալ նեղ խողովակ մըն է , ու կազմու-
թեամբ նման՝ աղիքին : Որդի ձեւով այս յա-
ւելուածական աղիքը նոյն խակ կրնայ բացա-
կայ ըլլալ . եւ հեղինակ մը կը հաստատէ թէ
իր քննած մարդկային զիակներու հարիւրին
մէկը չունէր այդ յաւելուածը :

Կուրաղիին երկայնութեանը մասին որոշ
բան մը ըսել կարելի չէ . մինչեւ ինը մատ-
նաչափ (23 սանդիւմ.) երկայնը տեսնուած է ,
ինչպէս նաեւ յիշուած է մէկուկէս մատնա-
չափէ (38 միլիմ.) կարճը : Միջին երկայնու-
թիւնը կրնայ համարուիլ չորսուկէս մատնա-
չափէ (38 միլիմ.) մինչեւ երեք մէկ տասնե-
րորդ մատնաչափ (79 միլիմ.) :

Դիակներու վրայ մանկրկիւս զննութիւններ
եղած են ստուգելու համար այս կուրաղիին
պարունակութիւնը : Զանազան հիւանդու-
թիւններէ մեռնողներու մարմիններու զննու-
թենէն հասկցուած է թէ կուրաղին սովորա-
բար կղկղանք կը պարունակէ , ինչպէս ար-
դէն բնական է հետեւցնել իր դիրքէն : Կու-
րաղիի բորբոքում կամ աքանձիսիք ունեցող-
ներու զիւղնութեան ատեն , սակայն , այդ
պղտիկ խողովակին մէջ թխմուած գտնուած

են հետեւեալ տարօրինակ առարկաները ,
ոսկորի կտոր , դնդաճեղ , քամ , ձուկի փուչ
կոճակ , փորի ճճիններ , եւայլն , եւայլն :

Ասանկ յօդուածի մը մէջ , որ ընդհանուր
ընթերցողներուն ուղղուած է , աւելորդ պիտի
ըլլար զիտական խրթնութիւններու մէջ մտնել
եւ ճառել տխտաբանութեան վրայ : Ակնհայտ
է սակայն թէ վերը համարուած առարկաներու
ներկայութիւնը ինքնին բաւական պիտի ըլ-
լայ կուրաղիի բորբոքում առաջ բերելու թափ
կուրաղիին բորբոքումէն վերջ կամ նոյն խո-
անկէ անկախաբար երբեմն ալ կրնայ մե-
քանակութեամբ թարախ հաւաքուիլ այդ
գործարանին չուրջը :

Ներկայ վիրաբուժութեան համար դժուար
ին գործ մը պիտի չըլլար ձեռքի ճկով մե-
տին նման աղիքի մաս մը կարել , հանել ու
մէկդի նետել : Եւ արդարեւ , կարող վիրա-
բուժի մը համար ձեռքի մասը անդամաւոր
չափ դիւրին գործողութիւն մըն է կուրաղի
անդամատութիւնը : Կուրաղիին վրայ կատար-
ուելիք գործողութեան մը դժուարութիւնն
կը պատճառէ զայն չրջապատող ներքնաթա-
ղանթը , որուն մասնակի թէ ընդհանուր բո-
րբոքումը վտանգէ զերծ չի համարուիր երբեմն :

Այսպէս աքանձիսիք կուրաղիին բորբո-
քումն է , որուն պատասխանատու կը ճանչի-
ցուին տեսակ մը մանրէներ , որոնք ինչ
իցէ կերպով մուտ կը գտնեն հոն , եւ իրենց
նպաստաւոր պարագաներէն օգտուելով՝ հոն
կը հաստատուին ու մինչեւ խակ պղտաթի-
ւեանց կը բերեն :

Տարակոյս չունիմ թէ անոնք որ նոր լսե-
ցին այս հիւանդութեան անունը՝ իրենց միտ-
քէն պիտի ըսեն հիմա՝ « ա՛ն քեզի հա-
ալ » , որով ըսել կ'ուզուի թէ օրէ օր
հիւանդութիւններ երեւան կ'ելլեն , կամ
աւելի չիտակը՝ (իրենց կարծիքով) բժշկները
կը ստեղծեն նոր հիւանդութիւններ , ինչ
հաւատացէ՛ք որ բժիշկները երբեք պէտք
չունին այս վերջի յանձնառութեան . բաւա-
կան է իրենց՝ եթէ ճանչնան արդէն գոյու-
թիւն ունեցածները : Նոր չէ՝ կուրաղիի
հիւանդութիւնը , բայց սա ճշմարիտ է թէ
նոր ճանչցուեցաւ անոր բնութիւնը , որ

հասկացուեցաւ զարմանումի եղանակը : Ու հոս թերեւս հետաքրքրական ըլլայ նշանակել թէ ասկէ նոյն իսկ 150 տարի առաջ այս որդաձեւ գործարանի մասին զէպք մը կա՛յ տրձանագրուած :

Իրաւ է թէ ասկէ դեռ քսան տարի առաջ թիկնները շատ քիչ բան գիտէին այս հիւանդութեան վրայ , վասն զի շատ աւելի քիչ բան գիտէին կուրազի բնուած այդ պզտիկ գործարանի մասին : Ու քսանի որ տեղն եկաւ , կրնանք աւելցնել թէ Սըր Ֆրէտէրիկ Թրիվլէն նշանաւոր հեղինակութիւնը կը տեսչի կուրազի վերահաստական գործողութիւններու մասին :

Զարմանալի գուզադիպութիւն մըն ալ կարժէ յիշել այս կապակցութեամբ : Անգլիկէն էն նշանաւոր շարաթաթերթին՝ Լանսէթի Յունիս 28ի թիւին մէջ հրատարակուած է ուսումնասիրութիւն մը կուրազի բորբոքութիւն վրայ . այդ ուսումնասիրութիւնը ճառի նկատ արտասաններ է Սըր Ֆ. Թրիվլէն բժշկական ընկերակցութեան մը առջեւ , ու ասկէ քսանի մը օր վերջ գիտուածն անանկ կը բերէ որ ինք ըլլար աքսանճիսիթի գործողութիւնը կատարողը՝ Անգլիոյ թագաւորին մարմնոյն վրայ :

Առաջնակարգ վիրահատ մըն է Թրիվլէն , եւ դեռ երիտասարդ . հպարտութեամբ կ'ըսեմ թէ իրեն աշակերտելու բաղղը ունեցած եմ , ու իր բաղմաթիւ աշակերտներուն հետ վախճած իր հմտալից դասաւանդութիւնները : Համեմատութեան տիպար մըն էր . աշխատութեան օրինակ մը . ինքն իրմէ յաջողութեան ամբողջ ի վեր ելած է : Անգամ մը ահա՛նաւոր վիրաբոյժ մը դաշն բժշկական ժողովի մը ներկայացուցած ատեն կ'ըսէր «Տոքթ. Թրիվլէն իր ամբողջ կեանքը փորի ներքնաթաշկանութիւն մէջ անցուցած ըլլալ կը թուի» , որով իր հիպոթեզը կը յայտնէր Թրիվլէն ունեցած հիւանդութեանը վրայ՝ փորի գործարաններու եւ մանաւանդ կուրազի մասին :

ՏՈՒԹ. ՅՈՎՍ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

ՍԻՐՏԻՆ ՍԻՐԱԾԸ

(ՆՈՐԱՎԷՊ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԿԵԱՆՔԷ)

Ա.

— Է , տիրացո՛ւ , տահա պիտոր պէքէ՛յ յէ՞նք . . . :

Առջի ճօխ հարսնիքը ըմպեր էր եւ լուսարարը գետնի աւելորդ գորգերը ժողվելու , ջահերը մարելու զբաղած էր , ընդունելու համար միւս հարսնիքը՝ աղքատին հարսնիքը : Նախորդ պսակին ամբողջ տեւողութեանը դաւիթին երկաթ դուռին առջեւ հաւաքուած բազմութիւնը աւելի աղմկոտած էր հիմայ՝ ժամուռն պարպուիլը տեսնելով , եւ անորմէ մէկ երկու հոգի պօռացեր էին վերի խօսքը՝ բողբոջի շէշտով մը որուն մէջ դասակարգի խարութեան հոգին կ'առկայծէր .

— Է՛ , տիրացոյւ , տահա պիտոր պէքէ՛յ յէ՞նք . . . :

Երկաթ վանդակադուռը բանլիքի զոյգ հւլովումէ մը վերջ բացուեցաւ կռնակի վրայ , եւ ամբօխ մը ներս խօսեց , ծովի մարդերու խուռն ամբօխ մը՝ իրենց բոլոր այլազանութեան մէջ : Ոմանք առանց բաճկոնի , ֆօնելա շապիկին վրայ ճերմակ գօտի մը եւ անկից վար իրենց լայն փոթուոր , եւ բոպիկ ոտքերնին հէմլէններու մէջ . ուրիշներ՝ իրենց պրօտէ վիզով մաքուր շապիկին վրայ բալթօ մը ձգած ուսերնէն ի վար եւ զրգ պէյիճնի գուլպանուն վրայ բարձրակրունկ կիսակօշիկը կիսովի անցուցած , անձնիքնին բարտելով կը քաղեն . դաս մըն ալ ճերմակ աղտոտ ճիզղիկով մարդիկ , ծունկուըններնին մերկ եւ փոքրերնին ծոցւորի պէս դուրս ինկած մէջքերնէն , կարմիր թաշկինակները ուսերնուն վրայ . եւ ուրիշ տարազի այլազանութիւններ որոնք ներս մտան , յանկարծօրէն ժամ՝ իրենց ֆէսերը ամէնքն ալ մէկտեղ վար առած , խաշակնքելով սկսան առաջանալ դէպի խորան եւ «Հայր-մեր»ի սկզբնաւորութիւնները միացած՝ փայտակօշիկներու թիք-թաքին՝ թանձր աղմուկ մը բարձրացուցին մինչեւ կամար :

Հարսը փեսան հազուեցնելու համար պահարանէն ներս բերին : Ծերուկ կիներ , փէ-

չերնին իրենց մէջքը խօթած, թեւերնին վեր ստիծած՝ զարդարել սկսան հարսը — աղուոր, լուսինկայի պէս աղջիկ մը կարմիր երեսով, լեցուն եւ կորովի, ժողովուրդի ճշմարիտ գաւակ մը — իրենց ռաբիկ արուեստին բուրս կատարելութիւնը թափելով որպէսզի, հարսը առջի հարսէն աղուոր հագուած ըլլայ. եւ ամէն մէկ յարգարանքի վերջ աղօթք մը, մաղթանք մըն ալ կար՝ «չար նազար» է պահելու համար զայն :

Տեսած էք տղայ մը, կամ չէ՞ք եղած նոյնիսկ, որ առաջին անգամ դպրոց երթայ ու գրասեղանին առջեւ նստի . այդ վիճակին մէջ էր փեսան որուն վրայ ճմրթ կած, ներկուած յըտեկոյթ մը — պայմանագրական եւ ստիպողական հագուածք փեսին — անցընել կը ճգնէին քանի մը հոգի ու օձիգ մըն ալ վզին :

— Զիւէդ է պիտոր քաչես Միրիկ . կըսէր մէկը, որ քթանէ ճերմակ փողկապ մը կը կապէր անոր վզին, մինչ ուրիշ մը աւելի զուարթ :

— Ես՛, փեսայ ըլլալը խօլա՞յ պան կը կիսնաս կոր . . . կեցի՛ր նայինք, ծարն ենք ծրարոց . . .

— Ամա խըյախ էղար հա՛, Միրիկ, չիտակը . . .

Այս ամէն կատակներուն մէջ փեսան կը նեղուէր, կը սեղմուէր ու կը խնդրէր զաղբեցնել :

— Լմնցաւ Տէր Հայր, քոչեց անդիէն մեծղի մարդ մը, տարւոք, գիրուկ, որ ճաւնէսան հագած եւ լայն բուրդ գօտի մը կապած էր մէջքը . կնքահարն է եղեր :

Աղջիկները հարսը բերին անտան, փեսան ալ դէպի առաջ քնցին ընկերները . վայրկեան մը մեքենաբար բարձրացան երկուքի՛ն ալ աչքերը եւ իրարու երես նայեցան . արցունք մը եկաւ աղին սեւ բերեւուն ծայրը եւ դող մը սիրտին մէջ, խկ աղջիկը՝ նայուածքը վար առաւ, գէմքը մարը մտնող արեւի պէս կասկարմիր եւ կուրծքը ուռեցաւ հաճոյքէ մը ուր երկիւղ, սարսափ ալ կար :

Բազմութիւնը, երբեմնի աղմկոտ բազմութիւնը, հիմայ ոչխարի պէս լուռ, գլուխը

հակած կը սպասէր այն գերադանց յափառ. կուսին մէջ զոր հաւատաւորը կ'ունենայ եկեղեցիի մեծ մէկ խորհուրդին զիմաց, որմէ է նաեւ պսակը :

Ժողովուրդին համար ո՛չ մկրտութիւն եւ ո՛չ ալ յուղարկը այնքան յարգուած, այնքան յափառակող բան մը դարձած է քան պատկոբու միջոցին ամէնքն ալ կարծես հոգեկան տարապրումի մը մէջ են . սրտխեռեւ ան չատա՛կն է նոյն խկ, այսօրուանը, վաղուանը, մօտակայ պսակը, սիրտին հիմակու անկէ կամ անցեալ տարիանքը . եւ «Նշանաւ» Հայ-եկեղեցիին գերազանցօրէն յուղի աղջարականը, հոգի՛ն է, թախիծը, խնդը, լալը ամէն բան՝ զգայական վերաբարձրումի մը համար :

Ամուղջ պսակի միջոցին փեսան կուտք, որուն համար կնքահայրը իր հօր խիտ չնոտովը ըսեր էր .

— Է՛, է՛, Միրիկ . . . Խոչ տեղը կայ, Զօն էս ինչ էս . մինչդեռ հարսը՝ աղմկեալ եղանակով մը ձեռքը կը սեղմէր տղին, հազիւ կրնալով արդիւնել իր լեցունկ սիրտին փղծկումը :

Արարողութիւնը աւարտած էր . ամուղջ կնքահայրին ձեռքը պառաւ որ իր օրհնէքը չզլացաւ անոնց :

— Մէկ պարձի վրայ ծերանաք . իրարու խնի՛ր տեսաք :

Եւ ամէն կողմէ սկսաւ տեղալ բարի մարդերու միամիտ մաղթանքներուն շարքը, որ կուղար անուշ գգուանքով մը ընդկեղծկամովը :

Երբ ամէն բան լմնցած էր ալ ու հարսը փեսան մեկնած՝ վէճը դարձեալ սկսաւ . հարսնեւորները խուճի խուճի կը քալէին փողոցի մէջ ձեռքի ոտքի շարժումներով, ձայնի մեղմ բերու ելեւէջներով . ամուսնացողներուն արեւի կամ դէշ ընթացքին վրայ կը վիճէին . եւ աղմուկը որ կը մարէր տակաւ աշխատավայրին մօտեցնալովը, փակուեցաւ «Ասլա՛մ ետ» քերնին աղէկ ընէ . իրարու խնի տեսնանքի կրկին մաղթանքներով :

Բ.

Իրենց սէրին պատմութիւնը ըսելու հարկ կա՞յ — հոգ չէ թէ ան շատ տարբեր կըլտ ըլլա՞յ :

լայ քաղաքներն վատոյժ սէրերէն՝ ջերմանոցի ծաղիկներէն — քանի որ կը սիրէին զիրար ամբողջական, անձնդիր, խորարմատ եւ նախանձառուի այն սէրերէն մէկովը զոր աւարկը միայն կը զգայ իր տգիտութեան եւ խառաքարոյթի հան մէջ ։

Երկուքն ալ նոյն թաղը կը նստէին. Գուսմ-Գարուի դուռը, հոն ուր ծովը իր քղանցքը կը փռէ ծովի մարդերու միայարկ հիւղակնե-րուն առջեւ եւ ուր աղջիկները, մանչերը մեծցած են այն կորովով որ բնութեան արհաւիրքներուն սովորականութիւնովը կը ծլի Սէրը այդ զստակարգին համար այն միակ փորձանքն է որուն կրնան ենթարկուիլ, եւ անոնք, ալիքներուն դէմ իրենց տուած բոլոր մարտնչութիւնն խտացած, ջուրին, բնութեան սէրէն առցուն, տեսակ մը անատակութիւն ունին աղջկան սէրին, հոգ չէ թէ տեղին աղիկները շատ անգամ անտուրին մերկ սրունքով, կուրծքերնին կիսովի բաց եւ մարմննին թող. կին էակին հանգէպ անոնց օղիւրայոյց այս վերաբերմունքը բան մը չի պակսեցներ իրենց սիրտէն, միւս բոլոր սէրերէն. ընդհակառակը, շատ եւ ծայր աստիճան բարի կը մնան անոնք, բոլիս-սիրտ, խղճոտ շատ մը գովաբանուած փափուկ կազմերէ ալ աւելի. Ամուսնութիւնը պարտականութիւն մըն է անոնց համար եւ անհաշիւ այդ մթնոլորտին մէջ, սէրը՝ գլխաւոր ջիղը պէտք է կազմէ միացումին, այն սէրը որ վերջէն կու գայ պսակը կը բերէ իրեն հետ ։

Սակայն այս ամէն անանձնութեան, ինքնաշարժութեան մէջ երբ սէրը դայ հաստատուելի աղի մը կամ աղջկան մը ներսը, անիկայ կաննէ այն որոշ, խիստ եւ վճռական երանգը որ սովորական չէ ամենքին. եւ կուտայ ենթակայներուն հոգիի այն չքնաղ վրդովանքը՝ առաջին եւ վերջին ալ սիրոյ մը անձնագորհն հեղանքը, որմէ զատուելու համար կամ գոհացումը պէտք է կամ մահը. ծիշդ այս սիրով լեցուած էր Միրիկն ալ. ձկնորսի խոշոր-կեկ աղայ մը, դէմքը եւ կուրծքը արեւէն աղիւսի դոյն մը առած, լայն կուրծք եւ դճիւր-բալից թեւեր. աչքերը՝ խանձած յօնքերուն տակ անանկ յորինուածք մը ունէին որուն վրայ ուղիղ երկու անգամ չէիր կրնար նայիլ,

Յորեկ գիշեր ձուկի, իսկ իր եղանակին ալ ձմեռուկի կ'երթար շատ անգամ ։

Գ.

Անցած Սուրբ Սերգիոսին էր. գիշերուան սեւը մութ էր քսեր ամէն ղի եւ անձրեւ մը ուժգին, ընդհատ անձրեւ մը կը մարակէր պատուհանները, քմահաճ եղանակ մը նուագելով՝ կոտորած սրինգի մը հատկութեան-րուն նման ։

Իրենց հիւղակին սենեակին մէջ, բազմոցին անկիւնը նստած էր Միրիկին մայրը՝ Հոռոփ տուաւուն՝ կրակարանը ծուկուրներուն առջեւ, սուրճին դաւաթը ձեռքը. իսկ բազմոցին միւս ծայրը յենած էր աղան, զլուխը ափերուն մէջ, կռնակի վրայ պառկած եւ ոտքերը կրակարանին տակը խոթած ։

Անձրեւը կը շաչեցնէր ապակիները խօշ կայթերգի մը պէս, եւ հովը ծերպերուն փակցուած թուղթերը քակելով չարածճի աղու սլուրջիւն մը կը նետէր խաղաղ սենեակէն ներս ։

Հեռուէն երգի կտորներ եկան. հատած, կտրած գինովի երգեր՝ նուաղի խառնուրդով մը. Միրիկ առանց չարժեւու հարցուց ։

— Ա՛ս ինչ է ։

— Հա՛, նայէ մոռցայ ըսելու, խօսք առաւ-ծերուկը, հարսնիք կայ սօխախնիս . . . Մարտիկին աղան կը կարգուի կոր ասոր, կիտե՞ս . . .

— Ո՞ր Մարտիկին ։

— Իշտէ քեզ Մարտիկին ։

— Վա՛յ . . .

Լուսթիւնը դարձեալ արեւց սենեակին մէջ ։

Ծերուկը խօսակցութեան այս ընթացքէն վարուած եւ քունէն արթնցողի մը պէս, որ մէկէն ժամացոյցին կը նայի իր ժամադրու-թեան ատենին վիճակը ստուգելու համար, ուշադրութիւնով նայեցաւ աղին՝ բաժի մը ստուգումին երեւոյթով. տեսաւ անոր պե-խերը որոնք առատացած չքեղցած էին, եւ վիզը՝ որ հաստցած էր. գոհ ժպիտ մը նկար-ուեցաւ անոր դէմքին վրայ եւ թմրած երեւ-ակացութեանը առջեւ եկաւ հեշտ վայրկեանի մը տեսիլքը, իր աղին «Խաթունիկ աղւորիկ» հարս մը բերելու, մէկ զաւակը երկուքի վե-

րածելու եւ թումպուլիկ թոռերու տէ՛ր ըլլալու երազը . եւ խիզախ , առանց փափկու-
թեան կարծես :

— Է՛, Միրիկ է՛, ալ եկար հասար , չըսե՛ս քի տարօսը կ'օխս ըլլայ :

Տղան վարանեցաւ , տաքութիւն մը խու-
ղաց մորթին վրայ , տաօթի պէս բան մը զոր
զգաց բացարձակօրէն .

— Հասկցայ , աւելցուց մայրը , խըսեմք
մը հէլպէթ կ'իլլայ . հոգ մընեք զաւակս , մա-
րըդ օղջ ըլլայ նէ՛՝ ամէն պահ կ'ըլլայ :

Եւ սկսաւ իր սիկառը ծխարձակել՝ աչքերը
բան մը խուզարկելու պէս կծկած : Յետոյ
մէկէն .

— Հա՛, Միրիկ . Էպրաքսէ տայեկին աղ-
ջիկը ինտս՛ր է , տեսա՞ծ էս . . . կեցիր աղէկ
միտքս ինկաւ , վաղուընէ թէզը չիգայ՝ էրկու
չիֆթ լախըրաը կընեմ կը լմննայ կ'երթայ .
աղւոր , փարլախ , թօռունի պէս ախճիկ , հէմ
տանտիկին , հէ՛մ ալ մարիֆէթլի :

Միրիկ յուզուած վրդոված՝ այս որոշում-
ներէն , նստաւ եւ առանց ինքզինքը մատնել
ուզելու՝ առաջ կարգուիլ չուզելը առարկեց ,
եաքն ալ յիշած աղջիկը չուզեց :

Մօրը ուրիշներ թուելովը խօսքը երկըն-
ցաւ , դադափարները յաճախուեցան . եւ այս
ջերմութեան մէջ իր բոլոր մերժումներուն
միջոցին Միրիկ ինտոր եղաւ՝ Սուրբիկին ա-
նունը յիշեց . մայրը , խորամանկ կնիկ ,
կռահեց եւ անմիջապէս .

— Վա՛յ Միրիկ . . . ըսաւ , ըսել է քի Սուր-
բի՛կը կ'ուզես . . .

— Ձէ , ամմա՛ . . .

— Ուզածդ ան թող ըլլայ , ընդմիջեց պա-
ռաւը , ատ է նէ պան մը չէ . էղածի պէս
սեպէ , էս ալ վախցայ քի սանկ բէք վերերուն
աչկ ունիս , աւելցուց քմծիծաղով մը , ատ
է նէ հիչ , դուն քեզի ան սահաթէն նշանած
սեպէ անոր : Էղաւ լմնցաւ ալ , սա՛ ծառքս
պագ նայիմ . . .

Եւ իր մորթացած ձեռքը աղին թանձր
չրթունքին մօտեցուց , որ դայն պազաւ հար-
սնցու կոյսի մը քաշուողութիւնով :

Որոշեր էին . հետեւեալ օրը աղջիկտեսի
պիտի երթար Հոռոփ տունուն :

Այդ օրը անձառ եւ աննախընթաց ուրա-

խութեան մը մէջ արեւը ծագեր էր աղի
համար , որ խինդէն եւ կայտառանքէն դ-
զաց մինչեւ իրիկուն , մինչեւ մօրը՝ Սուր-
բիկինց տունէն դալը , մինչեւ իր գործէն վե-
րադարձը :

Ամբողջ ցորեկը փուշի վրայ կեցածի պէ-
աշխատելով հաղիւ կրցած էր տուն նետի
ինքզինքը՝ ուրախ լուրը առնելու : Վեր ե-
լելուն , մայրը սովորականին պէս չտեսաւ .
սենեակէն ներս մտաւ ճորալէն եւ ըսաւ .

— Բարիկո՛ւն մարիկ . . . որուն մէջ ամբ-
բան կար , այն հարցումը նոյն իսկ զոր չպի-
տի համարձակէր , եթէ հարիւր տարի ալ կե-
նար , ուղղակի ըսելու :

Մայրը զգաց սա . սուրուեցաւ . ինքզին-
քերանը կղպուած էր կարծես , եւ ինչպէս ալ
չկղպուէր այսքան մեծ , անհաւատարի ան-
կընկալի մը առջեւ : Սուրբիկը որուն համար
կը կարծէր որ հազարումէկ թեմեննաներով
պիտի տային , բացարձակապէս մերժե-
էին , մերժում մը որ անարդանք ալ ունէր
իր մէջ :

— Տահա ախճիկնիս պզտիկ է , ըսեր էին
առաջ . եաքն ալ .

— Հոռոփ հանրմ , Ասված խայրըբընէ
տայ , մերինը խըսմէթ չէ եղեր . . . ու ըստ
մաերմիկ պահու մը մէջ .

— Շիտակը կուզե՛ս քուրուկս , ինքէ
մենք օրթան էնք , Գաբիկ աղան կըսէ քի
ա՛լ ծովին մէջ քեար չի մնայ . աղջիկնիս
կրտսն ինտոր մեծցած է նէ . առաջ չի խեղաց
նէ պարէմ եաքը խնտայ . անոր համար չէ՞ք
չնորհք խանութպանի մը , եա զանաթքեարի
մը տալու միտք ունինք . . . է՛ , ինչ պա-
հենք :

Այս խօսքերը ծանր էին եկեր իրեն , ըսել
է իրեն տղան՝ առած կնիկը անօթի պիտի պա-
հէր հա՛ . . .

Միրիկ կռահած էր ամէն բան . բայց
աղերսառնքով մը մօրը կը նայէր , որ վեր-
ջապէս .

— Խըսմէթ չէ եղեր , տղաս , մրմնջեց :
Տարակոյսը որչափ դօրեղ ըլլայ դարձաւ
ոսկի եզր մը ունի ուր մեր միտքը կը պարէ
լարին վրայ շարժող աղջկան մը պէս . սա-
կայն պզտիկ շարժում մը , ստուգութեան

միակ առաջվարուժիւնը իր բոլոր մեղմու-
թիւնով եւ հաւանականութիւնով՝ մեզ մեր
էութեան մէջ իսկ կը ցնցէ . ասանկ եղաւ
Միրիկին ալ , որ զգացած , կռահած , ու կը
տեսնար ալ արդիւնքը թէ եւ , սակայն վճիռը
չէր առած դեռ , անողոքելի որոշումը՝ որուն
հարուածին տակ ընկճեցաւ պահ մը , կուրծ-
քը կքեցաւ : Այս միջոցին սակայն մայրը ուժ
առած .

— Ասլաժ ասանկ ուղեց , ի՞նչ ընենք
զաւակս , փառք տանք օր էօլիւմ չի գայ ,
չի կտուածը արձիկ ըլլայ , հարո՛ւրը հազարը
մէկ փարայի՛ քեզի պէս ասլան աղուն հա-
մար . . . Կառօր էր մնացեր , առ խէզդներուն
աղկա՛ն օր , քեզի ալ չեն հաւնիր կոր . . .

Աս խօսքին չէր սպասեր Միրիկ , կիրքը
լեցաւ ներքը , արժանապատուութիւնը վի-
րաւոր առիծի մը պէս արթնցաւ եւ աչքերը
վառ , բռնցքը սեղմ , իրիստ շեշտով մը
պոռայ .

— Թո՛ղ արձիկներն առնեն տէ՛ ա՛ղ-ճուրը
տենն . . .

Եւ մէկ կողմ քաշուեցաւ . Մտածեց պահ
մը , զղջաց այս անարգանքին համար զոր
ընէր էր անմեղ աղջիկի մը , զինքը բռն
կերպով , գիտէ՛ր , սիրող էակի մը նկատմամբ
Սակայն չէ՛ , ալ իրեն համար չէր այդ դուռը՝
որ իր երեսին դոցուած էր :

Դ

Հինգ ամիսներ անցեր էին այդ օրէն . Մի-
րիկ չմոռցաւ սէրը եւ ամէն անգամ որ նա-
ւակով անցնէր ծովեզերքի հիւզաշարին առ-
ջեւէն , սիրտի բզբոտումով մը երեսը անդին
կը դարձնէր՝ այդ տունը , այդ պատուհանը
չտեսնելու համար՝ ուր հիւսուած էր իր անդ-
րանիկ սէրին բոլոր պատմութիւնը . սակայն
եղբ կը բացուէր , ետին կը դառնար , անձկանքով
մը կը նայէր հոն՝ ուր Սուրբիկը իր կարմիր
պլուզովը նստած էր , ա՛ն ալ իր սէրին մէջ
յուսահատ :

Սէրը իր փոփոխութիւնները բերած էր
երկուքին ալ վրայ . աղջիկը ցրուած , մառ-
հոգ եւ ինկած երեւոյթ մը ունէր . տղան
աւելի զինովի՛ քմահաճի վիճակ մը :

Յունիսի տաքերը սկսեր էին . գիշերները ,
ամբողջ ընտանիքները տուններէն դուրս կը

թափէին մեծէ՛ն մինչեւ պզտիկը եւ խումբ
խումբ հաւաքուած կը տեսակցէին՝ ամէնքը
իրենց ճիւղին համաձայն :

Չորեքշաբթի օր մըն էր՝ առջի պսակին
նախորդ չորեքշաբթին , Միրիկ՝ Աճէմ Տաղիի
վերի անկիւնը քարի մը վրայ նստեր էր աչքը
ծովին բացերը յառած . Իրմէ քիչ մը անդին
կրկնաբար խօսուողութեամբ կը լսուէր եւ աղջիկ-
ները՝ թեւ թեւ , իրենց լայնաչուրթն քրք-
րիչները կը պտտցնէին այդ բացատարին մէկ
ծայրէն միւսը : Յանկարծ երկու ստուեր սա-
հեցան տղին քովէն , որոնց չնայեցաւ թէ եւ ,
սակայն սիրտը սեղմուեցաւ անորոշ նախզգա-
ցումէ մը : Շրջազգեստները հեռացան . հինգ
վայրկեան վերջ նորէն զգաց անոնց շրջիւնը
իր շուրջ . այս անգամ հեռանալուն սպասեց
նայելու համար . նայեցաւ . անձկութիւն մը
լեցուց իր կուրծքը . երթալ , փախլիլ ուղեց ,
սակայն հոն գամուած մնաց անտես զօրու-
թենէ մը , եւ տղի մը պէս սկսաւ շուրջի
քարերը մէկիկ մէկիկ ծովը նետել՝ մթու-
թեան մէջ անոնց կորուստը եւ ետքը սեւ
ջուրին մէջ մխուելուն պղպշաւոր ձայնին ա-
կանջ դնելով մեքենօրէն :

Ժամանակը անցած , բազմութիւնը քաշ-
ուած էր . ինքն ալ ոտքի ելաւ եւ ձեռքերը
գրպանին մէջ՝ կեցաւ վայրկեան մըն ալ :
Չոյգ ստուերը նորէն մօտեցաւ դանդաղ , եւ
անոնցմէ մէկը , թաշկինակը կուրծքին վրայ
բռնած , սարսափով լեցուն շեշտով մը հծծեց .

— Միրիկ . . .

Միրիկ դարձաւ , պաղ մը նայեցաւ դէմի-
նին որ յանցաւորի պէս դուրսը ծռած էր :

— Ի՞նչ է էղեր . . . Ըսաւ տղին ձայնը որ
կը ջանար իր խստութիւնը պահել :

— Ա՛խ , Միրիկ . . . Լսուեցաւ նորէն , եւ
աղջիկը աւելի մօտեցաւ տղին . « Ա՛խ Մի-
րիկ . . . » :

Հոռութիւնը ակրեց , խորունկ լուութիւն
մը ուր տառապանք կար . որմէ ետք երիտա-
սարդը հազիւ լսելի , զսպուած ձայնով մը .

— Հայտէ՛ քուրուկս առնո՞ղ կնա՛ ուշ է
վախթի՞ր . . . կնա՛ տէ՛ հօրդ , մօրդ խօսքը
մտիկ ըրէ . . . անո՛ք քու կէշութիւնդ չեն
ուզեր . . .

— Միրիկ , մ՛ըսե՛ր , մ՛ըսե՛ր . . . պիտի

մեռնիմ . . . եւ թաշկինակը շրթներուն բարձրացուց՝ արցունքը խղճելու համար :

Միրիկ կը ցնորէր , կը խենդենա՛ր . . . ու այդ գերազոյն վայրկեանին մէջ սա խօսքերը կրկնեց .

— Հայտէ քուրուկս տունդ կնա կըսեմ կոր , խըմէթ չէ եղեր . . . Ասված ասանկ ուզեց . . . իրա՛ւ դուն ինծի հէլալէն էիր ամմա , հարա՛մ ըրին . . . ի՞նչ ընենք քուրո՛ւկս , ա՛լ դուն ինծի համար չես . հարդ , մարդ իլէն՝ . . . քեզի առնողը՝ խե՛րդ տեսնան . . . :

Հեծկաւուքը մինչեւ տկոջին ծայրը եկեր էր . աղջիկը զգաց եւ ինքզինքը թողուց իր այնքան սիրած ազին կուրծքին վրայ , իրենց այս առաջին տեսակցութեան մէջ իսկ : Արուն ցնցուեցաւ , վրդովեցաւ էզի այս պաղատանքէն , դէպի իր կուրծքը եղած ինքնարձակու մէն , եւ անզգալապէս գրկեց զայն ուժգին , իր բիրտ թեւերուն մէջ ու վայրկեանի յիմա՛ր տենդի մը մէջ ուզեց ծովը նետուիլ , սա քովի ալիքներուն խորը , իր սիրտին միակ սիրածը , ադ հրեշտակը գրկած , շարունակելու համար այն խօլ նուպան որ զինքը կ'ընդելուզէր : Սակայն շանթանման ինքնեկու թեան մը մէջ ետ քաշուեցաւ . աղջիկը ետ հրել փորձած ատեն , ձեռքը անոր կուրծքին կակուղութեան մէջ մխրձուեցաւ . հեշտանքի լուռ սարսուռ մը եկաւ ջլառեց զինքը եւ մտիկ ընելով դէմինին աղերսներուն որ կըսէր .

— Ա՛խ Միրիկ . . . օտիդ պագնեմ . . . :

— Ի՛նչ , ի՛նչ , կրկնեց վճռակի :

— Մեռնի՛մ պիտոր . . . ազատէ՛ ինծի . . . եւ գլուխը աւելի ծռած , ձայնը աւելի ցած , « փախչի՛նք . . . » մրմնջեց :

Զկնորսը իր վայրա՛գ մոլուցքին մէջ ձեռքը մէջքին վրայ , գօտին գիրկը պտտցնելով գոչեց .

— Վաղը գիշեր , անուշ , վա՛ղը գիշեր .

Ե .

Առտուն Միրիկ իր հին վարպետին , Գէորդ Ռէյիվին քովն էր . ասոնք իրար հօր ու զաւկի պէս կը սիրէին : Տղան երբ ամէն բան խոտովանեցաւ , Ռէյիվը անոր ուսերը ծեծելով .

— Վայ չափղըն վա՛յ , ըսաւ . ըսել է ասանկ պաներ ալ հա՞ . բէք աղէկ , աղջիկը ուր պիտի տանիս . . . :

— Մե՛ր տունը :

— Աս չըլար իշտէ . հայտէ՛ նէյիսէ , մի տունը պէր , կնքահարդ ալ է՛ս պիտոր ըլլա՛ծօ՛ . հայտէ՛ նայինք :

Տղան երախտագիտութիւնով լեցուն՝ անոր ձեռքը պագաւ եւ երբ կը մեկնէր , կրնքահայրը գոչեց .

— Ինծի նայէ ծօ՛ , խենդութին մը չընես հա՛ . . . աղջիկին մէկ թելին չի պիտոր գլխի՛ կիմանա՞ս :

Այս խօսքերը վերաւորեցին Միրիկի սիրտը լարկացաւ . ասանկ մէյ մըն ալ նայեցաւ անոր երևան ի վեր բողբոջի շեշտով մը եւ եթէ դէմինը հօր տեղ դրած մէկը չըլլար , ապա մը պայթեցուցած էր արդէն անոր երկունքներուն ալ :

Այդ օրը իրիկուն չէր եղած . Միրիկ ամբարան որոշած էր . սիրտին սիրածը՝ տէրտէ՛րն ալ պատկածը պիտի ընէր . կամ պիտի մեռնէ՛ր կամ պիտի յաջողէր այդ գիշեր . եւ ասոր համար քանի մը դաւաթ խմեց՝ ուղիղը ցողելու համար եւ նախորդ գիշերուան տեղը գնաց : Մութը ծուփ-ծուփ կը ծփար չորս դի . ծաղկապարցած լիճի մը պէս անշարժ էր . փողով աղմուկները կը մարէին տակաւ . ամէն մէկ շշուկ սիրտի սեղմում մը կը բերէր անոր :

Յանկարծ մութին մէջէն ստուեր մը սանցաւ . տղան չորս դին նայեցաւ , իր վայրագութեան մէջ պատրաստ՝ ամէն ինչ գործելու : Ոչ ոք կար :

— Քալէ՛ , ըսաւ Միրիկ :

— Վո՛ւր , լսուեցաւ աղջկան կոտրած ձայնը :

— Քալէ՛ . . . :

Տղան չմտնեցաւ աղջկան , ոչ իսկ անոր հագուստին քսուեցաւ , եւ նուիրական , անձեռնմխելի առարկայի մը պէս առաջնորդեց զայն մութ փողոցներու լափերին թոքի մը մէջէն :

* * *

Ան գիշերուընէ ամբողջ փողոցը ոտքի ելած էր . Սուրբիկը փախցուցած էին . ամէն ճիգ պարապ ելաւ . ուստի լոյսին սպասեցին անոր «բարի»ին վրայ վստահ :

Առտուն Միրիկ լուր գրկեր էր աղջկան կողմին թէ Սուրբիկը ի՛նքն էր փախցուցած եւ տեղ մը հիւր ձգած՝ առջի պատկին երկու-

չարթի օրը ժամը պատկուելու համար :

— Բարեւ ըրէ. ըսեր էր լրատարին, իրենք կողքին կան, կողքին չի կան, ախճիկը ծառքս է, լաթերն ալ հազըր . . . հէ՛մ ալ, հիմակ- ուրնէ՛ կ'ըսեմ կոր նայէ՛, էկէ՛ր պան մը ընեն նէ, սակ ճիւղ մը պիլէ հանեն նէ՝ կը տես- նամ կոր ես սըւրկա . . .

Եւ սրճարանին անկիւնը ուր նստեր էին, բաճկոնը մէկ դի առնելով դաշոյնին շեղորը ցւցուց դէմինին :

ՅԱԿՈԲ ՏԵՐ-ՅԱԿՈԲԵԱՆ

ՀԻՆ ՅՈՒՋՄՈՒՆՔՆԵՐ

(ՍԻՐԵՐԳ)

Արթա մեջ հի՛ն յուզմունքներ կան, Սիրոյ կայծեր, քաղուած ԵԱՍ խոր, Ռոնց յուզեքն ալ հեռաւոր, հեռովով կ'օծեն իմ լուռ ներկան :

Ներքեմ անոնք ի՛նչ դառն, ի՛նչ քան Սուր կը կոսան՝ իմ վիրաւոր
Արթա մեջ՝ ուր յուզմունքներ կան
— Սիրոյ կայծեր — անքեղուած խո՛ր :

Այլ այլ յոյգերն հոգւոյս կու տան
Հետսուքիւններ, ըզմոնքներ մոր,
Մինչ կը խուսի կեանքն օրէ օր,
Մինչ կը իրէ մուրը մահուան
Արթա մեջ՝ ուր յուզմունքներ կան :

ՎԱՐԳԻՔՍ

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Ս. Պարսխաբ Հայրը՝ ընկերակցութեամբ Ա. Գործակատար Տիրքան էֆ. Տէր-Ներսէս- եանի՛ չորեքշաբթի օրը Կայս. Պալատ գնաց, Մայր Աթոռէն հասած ստորգ տեղեկու- թիւն մը կը հաստատէ թէ, կը դրէ Արեւելք, Ա. Հայրապետը մտադրած է 1903 սեպտեմ- բերին Ա. Էջմիածնի 1600 ամակիրն առթիւ Ա. Միւսօթի օրհնութիւն կատարել, որ 7 տարին անդամ մը տեղի կուեննայ Ա. Խաչին կամ Ա. Գէորգի տօնին օրը : Այս պատճառով,

կանուխէն պատրաստութիւններ կը տեսնուին Էջմիածնի մէջ, ուխտադնայութեանց կանո- նաւոր կատարմանը համար :

Բարիգի մեջ կառուցուելիք հայ եկեղեցիին հիմնարկէքը կատարուեր է անցեալ - ուրբաթ օր : Բրիչի տառջին հարուածը տուեր է Տ. Գէորգ Եպիսկ. Իւթիւճեան, որ յատկապէս հրաւիրուած էր այս արարողութեան նախա- դահելու համար. յետոյ Տ. Վառչապուհ քա- հանայ, Ինչպէս յայտնի է, այս եկեղեցիին շինութեան ծախքը ստանձնած է Պ. Աղեք- սանյր Մանթաշոֆ, ծանօթ բարերարը, 20,000 ոսկիէ աւելի զուժար մը արամադրե- լով առատաձեռն բարեպաշտութեամբ մը :

Տիրքան Չուհանեանի հողակոյտին վրայ, Իզմիրի մէջ, դամբարան մը կառուցանելու համար՝ ողբացեալ արուեստագէտին Օշիմբիա օրէնային նախերգը շքեղ տպագրութեամբ մը հրապարակ հանած են Յ. Սինանեան էֆ. եւ քանի մը արուեստասէրներ : Այս ճախատեա- րին վաճառումը բաւական յաջող ընթացքի մէջ է եւ մեր կողմէ ալ կը հրաւիրենք՝ Չու- հանեանի ասպանող գնահատող ու յիշատակը յարգող ամէն հայ անհատ՝ օրինակ մը գնել սնկէ : Այս սպասումին շնորհիւ է որ Զեմի- րեին հեղինակը պիտի ունենայ իր դամբա- րանը :

Մուշի Ս. Կարապետի վանքին 200 բուպլի նուիրեր են Նոր Նախըջեւանցի երկու բարե- սէր ազգայիններ :

Կիլիկիոյ Կաթողիկոսական ընտրութեան պատուիրակ Տ. Մովսէս Եպիսկ. Կէօմրիւք- ճեանի հեռագրուեցաւ Պատրիարքարանէն որ փութով Կ. Պոլիս գայ՝ ընտրական հրահանգ- ներն ստանալով Ատանա ուղեորելու համար :

Բանկալքիի Միթիթարեան վարժարանին մրցանակաբաշխութեան հանդէսը, որուն նկա- րագրութիւնը հրատարակեցին օրաթերթերը, ցոյց տուաւ թէ այդ կրթական հաստատու- թիւնը չա՛տ գոհացուցիչ վիճակի մը մէջ կը գտնուի, մասնաւորապէս Հ. Մէնէվիչեանի շնորհիւ :

Վերջին պահուն խորին ցաւով կ'իմանանք ՊԱՏՈՒԵԼԻ ՊԵՏԻԿԵԱՆԻ (Գրտակ) մահը :

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՏՌԱՄՆԵՐ

ՎՃԱՐՕՐԸ

Վ. Է. Կ. ԲՕԼ ՊՈՒՐԺԻԻ

Թիւ 7

— Դո՛ւն , աղաղակեց մայրը , դո՛ւն , դո՛ւն պատասխանատու՛ . Մի՛ ըսեր աստիկա , դաւակա , միտքէդ իսկ մ'անցուներ , ոչ դուն , ոչ հայրդ . . . Ե՛ս ըրի ամէն բան , չարունակեց կուրծքը ծեծելով՝ ինչպէս կ'ընէր եկեղեցիին մէջ , ես վրաս կ'առնեմ ամէն բան . . . Ե՛ս գողափարը ունեցայ ստակին մէկ մասը գործածելու , նախ քու զինուորական ծառայութեանդ : Ե՛ս համոզեցի Քոռափէռը : Անիկա չէր ուզեր : Ետեւէս քաշեցի զինքը . . . Ան կուզէր յետոյ չարունակել թռչակին վճարումը միւսին՝ դրամազլիւէն առնելով : Ե՛ս արգիլեցի զինքը : Վախցայ որ ստակը կը պակսի ուսմունքիդ աւարտմանը համար : Եւ յետոյ եղածը եղած էր . . . Ըսի քեզի թէ չափազանց կը սիրէի զքեզ , իմ յաւիտենական փրկութիւնէս աւելի , Աստուծո՛ւմ աւելի : Ահա՛ իմ մեղքս : Մնացածը ասկից առաջ եկաւ շատ բնական կերպով : Աղէկ գիտէի որ ինքզինքս դժոխքի կը դատապարտէի , բայց քեզի համար էր . . . Ահա տասը տարի է էծո՛մէն , կը լսե՛ս , տասը տարի է որ չեմ խոստովանիր , որպէսզի քահանան ինծի չըսէ թէ աւանդէն բան մը ետ առլ հարկ է : Կրնայիր անոր պէտք ունենալ . . . Այո՛ , շատ սիրեցի քեզ , դաւակա , եւ քու միջոցովչ է որ Աստուած պատժեց զիս՝ առջի օրէն իսկ : Չէ թէ զիս չարչարած ըլլաս երբեք , դուն որ կատարելութիւնն ես երկրի վրայ : Բայց ճիշդ երբ քեզ այնքան կատարեալ տեսայ , սկսայ սարսափ մը , նոխարագոցում մը ունենալ թէ այս կեանքը չպիտի տեսէր , թէ մենք չպիտի յաջողէինք , թէ դուն մեր ձեռքէն պիտի ելլայիր , մէկէնիւմէկ , երիտասարդ երիտասարդ , մեր ամէնէն մեծ յոյսին ոտենը , Հաւատա՛ , եթէ դժուարութիւններ ծագած ըլլային , եթէ այդքան շատ աշխատած չըլլայիր , ես չպիտի ունենայի սպաւորութիւնը մեր վրայ միշտ

ու միշտ կախուած սպառնալիքի մը՝ հետեւանք մեր ըրածին . . . Ուզեցի քնացնել այս սարսափը , կամաւորապէս պատժելով ինքզինքս , ու հայրդ ալ : Յորմէ հետէ տեսայ որ անիկա համոզուած էր իմ միջոցով , ետեւէնի որ ինքզինքը ամէն բանէ կը զրկէր : Ա՛լ չծխեց , ա՛լ սուրճ չխմեց , անհրաժեշտ միտքն կերաւ : Արդարութիւնը խոստովանելու համար , ըսեմ թէ մենք մեզի համար բան մը չառինք . . . Բայց ի դուր ծով պահէի , ինքզինքս կը չարչարէի , միտքն հարուածէի , միշտ սա գողափարը միտքն կուգար թէ աստիկա չէր բուեր , եւ թէ օր մը պիտի դար որ քու անձիդ վրայ ես պիտի հարուածուէի . . . Տարիները անցան , էծո՛մէն , ինծի առանց ուրիշ բան բերելու , եթէ պատճառներ քեզմով աւելի հպարտալուծ զքեզ աւելի սիրելու . . . Եւ քանի՛ քեզմով աւելի երջանիկ էի՝ այնքան աւելի կը մեծնար այն գողափարը թէ մենք իրաւունք չունէինք այս երջանկութեան : Բաւ լինէ՛ր գտներ միտքս բացատրելու համար . . . Բայց ամէն մէկ յաջողութեանդ , մեզ պարգևատրած ամէն մէկ ուրախութեանդ՝ ինծի այնպէս կուգար թէ պարտքերն իսկ կ'աճէր : Աղէկ ետեւես որ ես իրաւունք ունէի մտածելով թէ մենք պարտաւոր էինք ամէն բան վճարել օր մը , քանի որ այս կերպով կը խօսիմ քեզի . . . Այս մտածումը այնքան զօրաւոր եղած էր , այնքան ցնորեցողիչ , որ երկու տարի առաջ ուզեցի անկից քիչ մը թեթեւեալ փոխել : Հայրդ ու ես գիտէինք թէ միւսը բանակ մտած էր , յետոյ Վէրսայլի մէկ դպրոցի եւ թէ անկից վաճառուած էր ապօրէն ընթացքին համար : Յետոյ աչքէ կորսնցուցած էինք զինքը : Երեւակայեցի որ , եթէ կարենայինք զինքը գտնել , իրեն վերադարձնել եթէ ոչ ամէնը՝ գէթ մաս մը բան , զիս ճշդ ծան

բութիւնը պիտի թեթեւար քիչ մը , թէ այլ
ևս առ վախճ , սրտի այս բարախոտմը չպիտի
ունենայի . . . Ու Գոռպիէն վնասեց այդ
մանչը : Արդարեւ գտաւ : Ինչո՞ւ ես ալ ու-
զեցի տեսնել զինքը : Չկրցայ զիմանալ : Ֆի-
զիքական պէտք մը եղաւ աչքիս առջեւ ու-
նենալ զինքը . . . Այն տեսնին է որ զգացի ,
չօղակեցի պատիժը : Երբ համոզուեցայ թէ
ինչ էր եղած ան , խղճի խայթը բռնեց զիս ,
ու վախցայ չէ թէ մեզ , այլ քեզ համար :
Ինքնիրենս ըսի ինչ որ քիչ մը առաջ դուն
կըքէիր ինծի թէ , գուցէ այդ ստակով զոր
խաբէութեամբ առած էինք իրմէ , այնքան
վար ինկած չպիտի ըլլար : Աւանդին այդ
զեղծումին մէջ այլեւս միմիայն արգիլուած
գործածութիւն մը չտեսայ : Տեսայ ոճիրը . . .
Մնացածը կը հասկնաս . . . Առողքս այնքան
մեծ եղաւ որ այդ մարդը վերջապէս նշմարեց
զայն : Մտնելէ առաջ Պ. Հօտրիք իրեն դրած
էր զիտաւորութիւնները իր մասին , առանց
իր ու մեր անունը տալու : Երիտասարդը գի-
տէր թէ փոքր գումար մը կտակուած էր
իրեն : Առաջին երկու տարեթուակները ստա-
ցած էր : Յետոյ ոչինչ . . . Անիկա գուշակեց
ամէն բան , եւ տասնըջորս ամսէ ի վեր մենք
այն դաղափարովը կ'ապրինք թէ անիկա պի-
տի ընէ ինչ որ ըրաւ այս առտու , թէ պիտի
խօսի քեզի , եւ թէ դուն պիտի դատես մեզ ,
թէ պիտի դատապարտես ու արհամարհես
մեզի . . . Ա՛հ , եղբակացուց խանդաղին պա-
շտամբով մը , դատէ՛ զիս , դատապարտէ՛ ,
արհամարհէ՛ , էօժէն , բայց ո՛չ հայրդ : Խնայ՛
անոր , կ'երգնում որ ինքը յանցաւոր չէ : Ե՛ս
միտք ըրի , ես ուզեցի ամէն բան : Միակ
յանցաւորը ես եմ , Բարին Աստուած գիտէ
ասիկա , եւ ապացոյցը սա է որ ան թոյլ
տուաւ որ դուն միայն զիս դանես հոս հիմա
. . . Այս բանը չպիտի համարձակէի խնդրել
իրմէ : Արժանի չէի այսչափին : Բայց ներեց
ինծի , կը զգամ , որովհետեւ այնքան տա-
ռապեցայ . . . ինծի համար հոգ չէ , ա՛լ պիտի
կրնամ խոստովանիլ , հաղորդուիլ . . . Ա՛հ ,
էօժէն , զիմ' հօրդ . . .

— Ես իրաւունք չունիմ դատելու ո՛չ քեզ
ո՛չ զանիկա , պատասխանեց բժիշկը որ , ար-
հեստին բերմամբը թէեւ վարժուած տառա-

պանքի չփութին , անէացած կը մնար թըշ-
ուտութեան անգոռնդին առջեւ , որուն
եղերքէն քալած էր իր բոլոր երիտասարդու-
թեանը միջոցին , առանց զայն տեսնելու ,
առանց իսկ կասկածելու : Չէր գուշակած
նաեւ սիրոյ ցնորքը այդ մօր , զոր զատա-
պարտելու անկարող միակ մարդն էր ինք :
Իր գէմը ունէր մարդկային հոգի մը , մերկա-
պարանոց , համակ արիւննոտոգ , եւ հոգի մը ,
ուսկից ծնունդ առած էր իրը : Այդ խեղճ
հոգին ո՛րքան տառապած էր արդարեւ , եւ
սրաջանքն ու հաւատքը ի՛նչպէս դրոշմած
էին զայն իրենց մեծ հարուածներովը , իր
թաքուն չարչարանքին մէջէն՝ անիկա ի՛նչ-
պէս մաքրուած էր իր մեղքէն : Ամբողջ պա-
տիժը կ'ընդունէր ու կը պահանջէր զայն ,
ամէն բան իր վրայ առնելով , երկուքի հա-
մար ի՛նք քաւելու միայն տենչացող , իր
մեղսակիցը , իր ամբողջ կեանքին ծերունի
ընկերը զերծ պահելու մտատանջ այն գերա-
զոյն հարուածէն , որմէ ինք պատուհասուած
էր : Իր սրտին ո՞ր ծալքին մէջ որդին պիտի
գտնէր զայն դատելու եւ այլապէս գործելու
ուժը : Էօժէն մօրը մօտեցաւ , եւ բազումին-
քուն մէջ սեղմելով զայն , կ'ըսէր .

— Մայրիկ , սիրելի մայրիկ , ա՛լ մի տա-
ռապիր , ա՛լ մի լար : Ամէն բան կրնայ ան-
հետանալ , դարմանուիլ : Ես պիտի հարստա-
նամ : Ետ պիտի տամ այդ գրամը : Պիտի
բժշկեմ այդ գոբախտը . . . Երեսս նայէ . . .
Ժպտէ ինծի . . . Գիտես որ պարկեշտ մարդ
մըն եմ : Կ'երգնում որ խանդաղատանք ,
յարգանք միայն զգացած եմ քեզի համար :
Դու արցունքներդ ամէն բան ջնջեցին , ու
մնացածը ես պիտի կատարեմ : Ու կը խոս-
տանամ քեզ որ մենք ամէնքս ալ երջանիկ
պիտի ըլլանք . . .

Մայրը երիտասարդին ուսին վրայ դրած
էր զլուխը , ու մտիկ կ'ընէր անխօսուկ , այդ
սպիտակահեր խեղճ զլուխը երեքցնելով միայն
մեղմ շարժումով մը որ «Ո՛չ» կը պատասխա-
նէր յոյսի այս խոստումներուն , — համակա-
մող «ո՛չ»ը մահամերձներուն , որոնց կը նկա-
րագրես այն պտոյտները զորս գիտեն թէ
երբեք չպիտի կրնան կատարել , այն հաճոյք-
ները զորս չպիտի ըմբռնեն այլ եւս : Եւ

այս մունչ ժխտումը այնպէ՛ս կը յայտնէր անդարմանելի անդոհութեան մը ճշմարտութիւնը որ Էօթէն ինքն ալ վերջապէս լռեց, իայց այդ պառաւ գլուխը պահելով միշտ ուսին կրթնած, օրօրելով, դգուելով զայն, մինչեւ որ շատ ծանօթ աղմուկ մը մէկէնիմէկ զանոնք հեռացուց իրարմէ : Զեռք մը բանալի մը կը խոթէր մուտքի դրան կզպանքին մէջ : Հայրն էր որ տուն կը դառնար :

— Մի՛րա առ, մայրիկ, ըսաւ Էօթէն : Կը խոտանամ որ ան բան մը չպիտի իմանայ . . .

— Եւ խօսքս բռնեցի, — կը կրկնէր ինծի Էօթէն, երբ վերստին տեսանք զիրար, ու այս տեսարանը պատմեց ինծի, — ու երեւակայէ՛ ինչ ճիգով մը : Միւս սենեակը անցայ ժամանակ ունենալու համար աչքերս սրբելու, դիմագծերս շտկելու : Եւ կը լսէի հօրս ձայնը որ կը հարցնէր. «Վայ, Էօթէնը եկե՛ր է, ա՛հ ի՛ր զլխարիը» : — «Այո՛, կը պատասխանէր մայրս, մատենադարանին մէջ զիրք մը կը փնտռէ : Ազկկ որ եկաւ այս առտու : Դուրս ելած ատենդ շատ սկար կը զգայի ինքզինքս : Բննեց զիս, բան չիկայ եղեր . . . » :


Մայրս երկիւղած սուտ մը դատած էր, որուն շնորհիւ կրցայ ներս մտնել, առանց հայրս զարմացնելու կարծրած արտեւանունքներուս եւ այլալից գէմքիս վրայ : Առանց այդ պատրուակին, ակամայ պիտի մտանէի յուզումս : Անմիջապէս բաժնուեցայ իրենցմէ : Ա՛յ կարողութիւն չունէի միտլու . . . Կը հաւատա՞ս, ամէնէն դմնդակը տոյգ առաջին ժամը եղաւ, ուր ես առանձին դառնուեցայ : Երկ չիտակ քայեցի, արագ, անհունօրէն : Կուզէի խոյս տալ, հեռանալ ինքզինքէս, այլ եւս չհանդիպիլ մտածմանս, ինծի կը թուէր թէ այդ մտածումն իսկ այլեւս իմն չէր, թէ գոյցած էի զայն, գոյցած էի իմացականութիւնս, գաղափարներս, անձին լաւագոյն փառը : Աշխատութեան այն տարրները որոնք ըրած էին զիս ինչ որ էի, այդ Գիտութիւնը զոր այնքան սիրած էի, այդ մշակումը որով այնքան կը հպարտանայի, ինքնիրենս կը կրկնէի թէ անոնք գոյութիւն էին, գոյութիւն, գոյութիւն, թէ այս բոլորը ունեցած էի ի վնաս ուրիշի մը, ուրիշի

մը ստակովը, եւ այդ ուրիշը աչքիս աջ կուգար իր գարշելի սենեակին մէջ, իր գարշելի զէմքովը, խօսելով այդ գարշելի լեզուով իր բոլոր անարգութիւնը իմ վրաս : Գար կ'իյնար : Իզուր ինքզինքիս կ'ըսէի ինչ որ մայրս ըսած էր ինծի, թէ ես չէի պատասխանատուն : Բաներ կան որոնց վրայ վիճուիր, ինչպէս կեանքի ու մահուան վրայ : Այդպէս է կամ այդպէս չէ : Այդ պատասխանատուութիւնը իմ վրաս, իմ մէջս էր : Երբ կարենայիր գիտնալ թէ քեզի սրտած գոյք մը, մատանի մը սպաննութեան մը արկիւնք էր, վայրկեան մը իսկ չպիտի կրէիր զոյն, պիտի բրցնէիր, հանէիր, պիտի նետէիր, ձեռքիդ վրայ արիւն չունենալու համար : Եւ միթէ կրնամ ուղեղս հանել նետել, եւ, ահա, նոր հետ ինչ որ ինծի եկած է միւրեք զրկանքովը : Առջի վայրկեանին ասիկա էր զիս ամօթէ ու վշտէ խենթեցնողը : Թէ այդ գոյցուած ստակը մտքիս մէջ մտած ըլլայ, թէ ես չկարենամ ետ դարձնել այդ աւանդը, զոր այդ խեղճերը չարաչար գործածած էին իմ շահուս համար : Բայց ե՛տ պիտի դարձնեմ նեմ զայն . . . Ետ պիտի դարձնեմ . . .

(Շարունակելի)

ՀԱՅՈՒՆԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

Մ. Ս. Ա. Ա. Ջ. Ա. Ր.



Վարժարանիս նոր տարեշրջանը պիտի սկսի Սեպտ. 10 (Ն. Տ.) Դշ. : Գիշերօթիկներու տարեթուական է 12 Օսմ. ոսկի, որուն կէսը պէտք է վճարել Սեպտ. սկիզբը, եւ միւս կէսը՝ Յունվարի մէջ : Դաշնակի դաս առնողները 1½ Օսմ. ոսկի աւելի կը վճարեն :

Վարժարանին յայտագիրը՝ փափաքողներուն ձրի կը զրկուի : Բանակցութեանց համար դրել առ Տոթթ. Ս. Դավաղճեան, Ասեմապէտ Սնարակալորդեան, Ասաբապար :

1-5

Արժուանքի Կ. Ս. Ի. Թ. Ի. Ճ. Ե. Մ.

Տպագրութիւն Ե. Մ. Ս. Թ. Ե. ՈՍՍԵԱՆ
Կ. Պոլիս, Ֆինանսըլար եօղաշու, Թիւ 27

ԱՌՁԵՐՆ ԲԱՌԱԳԻՐԻՔ

ՀԱՅԵՐԷՆԷ ՖՐԱՆՍԵՐԷՆ

Այս Բառարանին երկրորդ տպագրութենէն հաջորաւոր օրինակներու կարճ միջոցի մը մէջ վաճառուիլ տալէն զօրաւոր տպագրոյցն է գործին արժանեաց :

Մասնաւորապէս Փրանսերէն լեզուն ուսանողներուն համար պատրաստուած ըլլալով անդերձ պիտանի եւ օգտակար է սուհաստրակ ամէն կարգի անձանց :

Իր պարունակութեան ճոխութեամբ , թուղթի եւ տպագրութեան մաքրութեամբ ու կազմի գեղեցկութեամբ հայերէն հրատարակութեանց ամենէն աժանը կրնայ կոչուիլ :

Գին զօրաւոր ֆառօցնէ կազմի 25 դր.:

Գին ընտիր լաթակազմի 27 դր.:

Կեդրոնաւեղին է

3. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ վաճառատուներ , Ֆիննանքլար Էօգուտու , Կ. Պոլիս

ԻԻՆԻՕՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ ԱՊՍԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

ՀՐԴԵՀԻ ՃԻԻՂ

Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ փաստք	240,000,000 Ֆր.
1899ին գանձուած ապահովագրին	19,500,000 »
Դրամագլուխ եւ պահեստ	105,000,000 »
Ապահովագրեալ դրամագլուխ	18,000,000,000 »

ԿԵՆԱՑ ՃԻԻՂ

Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ փաստք	99,000,000 Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253,000,000 »
Դրամագլուխ եւ պահեստք	150,000,000 »

« Ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ լինի » ի ապահովագրեց կ'ընծայէ հսկայ երաւխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ :

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց գեղչեալ գիներով : Նպատաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ որ եւ է ընկերութեան պայմանները : Շահարաժիններու տարուէ տարի անմիջական վճարում , որով իւնիօնի ապահովագրութեան ԶԵՐՄ են այն վնասներէն եւ յուսալսաբութիւններէն , որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք , որ ԵԱՏԱՐԱԺԻՆԵՐՈՒ ԲԱՐԴՄԱՆ (accumulation des bénéfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՄԱԿԱՐ դրութեամբ գործող ընկերութեանց կ'ապահովադրուին :

Ընկերութեան դրամատունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Կ. Պոլիս , Կալարա , Թահապուրուն խան , Օսմ. Պանֆային դիմացը

Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

ՏՊԱՐԱՆԸ

Յարատել գարգացմամբ հասած է Տպարաններու
առաջին կարգին.

ԿԱԶՄԱՏՈՒՆԸ

Անմրցելի ըլլալու կէս դարու համբաւը կը վայելէ.

ԹՂԹԱՎԱՅԱՌԱՆՈՑԸ

Ճոխ մթերք մը ունի լաւագոյն տեսակէ

Թուղթերու, Պահարաններու, Տոնարներու
եւ Դաստենեկի սակեմ տեսակ պիտոյից.

Հետեւաբար աւելորդ է ըսել թէ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ, ԿԱԶՄԻ
ԹՂԹԵՂԻՆԱՅ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ամէն կարգի յանձնարարութեանց
համար դիմուելիք լաւագոյն հաստատութիւնն է

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

ՊԱՅՊԸԼ-ՀԱՌԻԶ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ